Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ploinm-14

282
283
284
285
286
287

910.4
1-15

no. 750
p. 210

2004

ԱԼԶԱՐԱՆ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չակմակճիլար Մեծ Նոր խան թիւ 5-6

ԵԱԼԹԱ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՆԱՀԱՆԳ

ԳՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ



(Ա. Հայոց)

ՎԵՆԵՏԻԿ

1910

13286 P

ԵԱԼԹԱ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՆԱՀԱՆԳ

ԵԱԼԹԱ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՆԱՀԱՆԳ

ԳՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

1910

14286
286-2016

N S

ԵԱԼԹԱ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՆԱՀԱՆԳ

(ՏԱՒՐԻՉԵՍԿԱՅԵԱՅ ԿՈՒՊԵՌՆԻԱՅ)

---

*Եալթա (ռուսերէն – ЯЛТА). Նոր և փոքր քաղաք Ռուսիոյ՝ Խրիմ թերակղզւոյն հարաւային ծայրը՝ Սև Ծովի վրայ, ունի շատ գեղեցիկ դիրք, ծովի ու լերան առողջարար օդ, մանաւանդ կուրծքի հիւանդութիւն ունեցողների համար, (միշտ՝ մի քիչ բարձր տեղի օդը աւելի լաւ է). քաղաքը շինուած է ծովեզերեայ և եռանկիւնաձև երեք կողմն գոգաւոր լեռներէ և բլրակներէ շրջապատեալ, տները բլրակներու կրծքերուն զառիվայր և զառիվեր շինուած են և նոր հետզհետէ տներ, դաչաներ պարտէզներու մէջ կը շինուին *.*

* *Բնակիչք՝ 20,000էն աւելի կը հաշուին իսկ տարեկան հիւր եկողներ, որ օդափոխութեան կ՚գան կու գնան 25,000–40,000 կարելի է համրել։*

սրանց շատերը ամառը իրը տնային հիւրանոց կը ծառայեն, ոմանց ալ տէրերը՝ ամառը կու գան այստեղ օդափոխութեան 3–4 ամիս մնալով կը վերադառնան իրենց տեղերը, նոյնպէս ուրիշ եկեղեցիներ։ Զմեռը սաստիկ ցուրտը 2 ամիս հազիւ կ՚ըլլայ, մանաւանդ երբ արևմտեան հովը փչէ, այն ատեն կատարեալ ձմեռ է՝ մինչև իսկ գարնան և աշնան տեսենները։ Օդը փոփոխական և խոնաւ է. իսկ ամառը՝ սքանչելի զով, նաև քաղցր հով. անձրև շատ քիչ կու գայ այդ միջոցին, փոշին անպակաս է. փողոցները շինուած են խճուղի մանր տեսակ փափուկ աւազով, այնպէս որ կառքերը ձայն չեն հաներ և հիւանդներուն անհանգստութիւն չեն պատճառեր. վերին աստիճան հիւրասիրութիւն և հոգատարութիւն և խնամք կը տարուի եկեղեցիներուն. ամբողջ քաղաքի մէջ փողոցներում հազիւ 1 – 2 աղբիւր կայ. իսկ ներսը բակերում, իւրաքանչիւր տուն իւր համար ծորակ մը ունի ջրի համար. ջրի իւրաքանչիւր դոյլը (վէտրօն) մէկ կոպէկ է, զոր քաղաքին կը վճարէ տանտէրը։

Քաղաքիս բնակչաց մեծամասնութիւնը ռուսներ են. կան հայեր, յոյներ, հրէաներ

(գաղտուկ), թաթարը, և այլք։ Հայք * եկած են Տրապիզոնէն, Բաբերդէն, Վանից, Շապին Գարահիսարից, Սալմաստից, Բաղէշից, Մշից, նաև Կովկասից ու Խոիմից։ 300էն աւելի հայ գործաւոր (բանւոր) կան՝ աշխատասէր. այլ և այլ տեղերէ են, մեծամասնութիւնը՝ գիւղերից. կան առևտրականք և արհեստաւորներ. Նապերէժնայում Ամիրխանով՝ 2 խանութ ունի կովկասեան ապրանաց. մին Լիվատիայ կամուրջի քով, իսկ միւսը Մարտինովի պարտէզի քով. Սարիպէկովը՝ արծաթ — ոսկի գործեղէնների. Լազարով՝ տպածու թանկագին իրերի. Ստեփանով՝ Մօրակայ ուլիցան՝ ունի կաուչինցայ՝ լաւ կերակուրներ ուր և տեսակ տեսակ ոգելից ըմպելիքներ մաքուր ու էժան կը ծախուին։ Մ. Կարապետ Պետրոսով, պատրաստ կօշիկի (կ'ընդունի նաև նորոգելու, ունի բանւորներ)։ Յակոբով և որդիք — արծաթագործեղէնների, Զալատարով, ընկ. և որդիքն՝ սրճարան. Նախշունով՝ տպածոյ վաճառք. այդ մագա-

* Սրանց պատմութիւնը տես «Գաղթականի մը չարչարանքը. ցաւալի տանջանքը». անունով տետրակիս մէջ որը պատրաստուած եմ։

1. Հիւրանոց։

զինուոն է բարի ճշմարտախօս ծերունի Գրի-
գորիկ աղան, որ կը ծառայէ։ Մ. Խաչիկ.
Պետրոսով (եղբարքն են), առաջինը Մ. Կա-
րապետ պատրաստ կօշիկի. Պետրոսով՝ սա-
փրիչ (այս ուրիշ է)։ Մսի Պազարում՝ Կա-
րապետ Մեռկելով՝ պտղավաճառ. Օկանով
(Օհանով) իւղ և ձու – կաթնավաճառ։ Սառ-
ոի բազարում՝ Գրիգոր Վարդանեան, ծխա-
խոտավաճառ. Նախշունով եղբարք՝ ման-
բավաճառ. Ադամ Տէլիպալթեան չոր
սուրճ (ծեծված) պատրաստող. Սաքել
Ներսեսեան և ընկ, Բենիամին Թէօլէեան.
չոր սուրճ (ծեծված) պատրաստող. Տա-
պաղով՝ մանրավաճառ, Սեղրակ Աստուած-
տուրեան եւ Եղբ. պտղավաճառ, Սա-
հակ՝ պտղավաճառ, Արմենակ՝ պտղավա-
ճառ, Վարդան Թամալեան՝ սափրիչ, Սա-
հակ՝ Գաբրիէլեան՝ սափրիչ, եղբայրն՝ որ-
ճնաղիր վարպետ. Տիգրան Սևորդեան՝ դեր-
ձակ. Մկրտիչ, Արշակ Պապիկ, Եղբարք
Ազնաուրեան (չէօվէքչի) չափոլաճի։ Գա-
բրիէլ Կարօեան՝ չափոլաճի, Եփրեմ Պա-
շարաթեան՝ չափոլաճի, սափրիչ Խաչիկ
Թաւշանճեան, սափրիչ. Գալատեան. կօշ-
կակարներ, Նշան Գալատեան, Եփրեմ
Նալչաճեան, Մարգար Փոթոեան։ Բայ-

մաքամով եղբարք, մէկը փաստաբան և միւսը Պրիստավ է այս տեղաց. ու ուշասկային, լաւ անձ մ՝է երկաթագործ Պաւլօ (Պօղոս), Գարագաշ։ Ստեփան Կտանով, Աբշակ Կտանով, այս հիմայ և պատուրիեայ մանրուքի խանութ ունի եղբայրը Աւետիս ներկարար. սատ անդ խանութ ունի. Խապէնտիրեան՝ լաւ նօթա յօրինող, Կիրասոնցի Յակոբ՝ պողավաճառ, Յովհաննէս Ղայդճեան՝ պողավաճառ. Եղիայ՝ պողավաճառ, Սեղ. Վարդ՝ պողավաճառ. Եկորոս Պէնտէրէցէն՝ պողավաճառ, Պետ Պետրոսեան գործակատար. Միլան Դաւիթովիչ՝ Ռուսկի շոգենաւային ընկ. գրասենեակում գործակատար է։

Սրճարան (քայֆէ) բանեցնողներ. Գալուստ Կտանեան, Ալեքսան տէր-Խաչատուրեան (սա ուրիշի վարձու կու տայ, ինք կ՝ շահուի), Աւետիս Յարութիւնով, Պօղոս և Ընկ., Մօրուք Յակոբ, Հաճի Ադամ Վարդանեան։

Կան ուրիշ յոյնի և թուրքի սրճարաններ. ամէն սրճարան ունի պառկելու տեղ, ուր մարդիկ գիշերեն, անշուշտ փողով, իւրաքանչիւր անձի 10–50 կ. իսկ հիւրանոցները 50 կպ. — 3 ռպ.

Օտարներից, Նիկոլայ Ֆոլթով և Որդիք, Պօպօնտուպուլօ Եղբ., Պէքիրով, Պարպէտով, Զայիրով, Տէրէշչէնկօ, Կիրիաքով։

Կան հացագործ (ֆրուն) Բէյլուլ էֆ. Տարաքճի, Զառուտի Լմին էֆ., Մառանտիտի, և այլք։

Հայք ունին աղօթատուն մը, որ վարձով սենեակ մըն է. գրեթէ տասը տարի առաջ Մհտ. Կարապետ Պետրոսովը և Մօրուք Մինասը հիմքը դրած են, նաև հանգուցեալ Զոնտիկճի Ցակոբը ևս աշխատած է, նախ մի Միքայէլ անուն հասարակ վարդապետ մը բռնեցին, յետոյ քահանայ մը բերին, հին մեթոտով սովորեցնող երեխանց, բայց երբոր, բաւական նիւթականներին ապահովեցաւ՝ հեռացաւ. իսկ այսօր նոր ուսեալ քահանայ մը բռնեցին, և անցեալ տարի նախակրթարան մը բացին։ Երեխաներու նոր ուսեալ վարժապետ մը բերին հայերէնի և ռուսերէնի, Պ. Խաչատուրեան. այժմ երբեմն հանդէսներ ալ կ՚տրուի յօգուտը տեղւոյն դպրոցին. ուղիղը ըսելով Եալթացիք բարի նպատակի համար չեն խնայեր իրենց լուման, մանաւանդ ազնիւ մայրերը. շատ գովելի է իգական սեռի այս

յատկութիւնը։ Արևմտեան հիւսիսային կողմը Կրանի – Կրէատի (Կարմիր – Խաչ) քով նոր և մեծածախս ժամ մը շինում է, երկու տարիէ ի վեր, հին ժամերու ձևով, Պ. Ղուկասով, ի յիշատակ իւր 18 տարեկան վաղամեռիկ աղջկանը ուր ինքն ևս պիտ թաղուի և իր ցեղը։ Անշուշտ դըպրոց մ՝ալ քովը պիտ՝ շինէ, ինչպէս լըսեցինք. ցանկալի էր դպրոցի եկամուտը ապահովուած լինէր և թէ արհեստներու բաժին։ Ապագայում հիւանդանոց ալ պիտի շինուի հանգուցեալ Պ. Աթարովի նուիրած 22000 ր. փողով։ Ինչ գեղեցիկ ծրագիր և սուրբ գործ։ Ազգ մը կամ մարդիկ, որ ունին բարձր դպրոցներ և հոգ կը տանին նրանց գոյութեան և առողջապահութեան, ըսել է որ գիտեն մարդկութեան յարգը, և ապագայում կ՝ունենան լուսաւորեալ անդամներ։

Քաղաքը 2 «Բլուրի» ձոր կայ, 2 փոքր գետակ. մին կ՝անցնի Այա–Վասիլ թաթարաբնակ գիւղի ներքևից։ Այս մեծ գիւղի տեղը բարձր է, թաթարաբնակ, պարտէզներով, այգիներով շրջապատած. ունի քաղցրահամ ջուր. փողոցները ծռանուռուռ, անմաքուր. ունի տեսակ տեսակ

պտուղներ. այստեղից գլխաւոր բերքն են ծխախոտն, և խաղող՝ որուն ամենաընտիրը շաշլա բուսած, կպեճը շատ նուրբ է՝ դիւրամարս և քաղցրահամ։

Երեք թաղի բաժնուած է և գրեթէ զուտ թաթարաբնակ, քաղաքէս հազիւ կէս ժամ հեռու է, և օր մը պիտի լինի որ այս ալ մտնայ միանայ քաղաքին հետ։ 3 դպրոց ունի հին մեդոտով. բնակիչները հիւրասէր են. ժամանակաւ այս տեղերը յոյներ կը բնակին եղեր, արդէն իր անունէն ալ յայտնի է (ինչպէս Ա.յա–Վ.ասիլ Սուրբ–Վ.ասիլ)։ Հանգուցեալ Կատարինէ Կայսրուհուն ժամանակ, գիւղի յոյն բնակիչները խնդիրք են տուած, որ իրենց տեղափոխէ ուրիշ տեղեր. որ յարգելով նրանց խնդիրքը՝ տեղափոխած է։ Բայց եթէ գիտնային որ այսպէս պիտ՝ յառաջադիմէ քաղաքը և իրենց պտուղը գին պիտ՝ ընէ՝ ինչպէս այժմ տուղ գնով կ՝ծախեն, այն ատեն չէին չուեր։ Արդէն քաղաքի տեղը անտառ մըն էր, և հազիւ կար 5–10 տուն. իսկ հիմայ գնալով միշտ մեծանալու վրայ է. մանաւանդ գործերն ալ գրեթէ ամառն միշտ անպակաս է, իսկ ձմեռն ալ մերթ ընդ մերթ կ՝ լինի։ Ա.յժմ Ա.լուպկա աւելի գնումեն։

Փոքրիկ գեղակը՝ առուակի կը նմանի* կ'անցնի Տէրէքէոյ ըսուած գիւղի առջևից և Մարտինովի պարտէզի մէջից ծովը կը թափի։ Այս գիւղը զառիվեր զառիվայր լեռան բլրակի լանջքի վրայ շինուած է. արա ալ փողոցները ծուռնումուռ, նեղ, և անձրևի ատեն ցեխոտ են. ընակիչք գիւղի բոլորտիքը ունին պարտէզներ, այգիներ. քաղաքում ունին ոմանք թաթարներից՝ կալուածներ, կան և առևտրականներ։ Բնակչաց մեծամասնութիւնը թաթարներ են. գրեթէ շատը եկամուտներով կամ պարտէզի բերքի ստացուածքներով կ'ապրին։ Քաղաքին ամբողջ հողը գրեթէ թաթարներուն կը պատկանի եղեր. բայց մեծամասնութիւնը էժան ծախել են շատ էժան։ Ատենօք (26 տարի առաջ) մէկ արշին տեղը մէկ «մանէթի» տրուածը, այժմս 100 մանէթի (ռուբլի) հազիւ կը տրուի, և այն ալ լաւ տեղը չեն տար, որովհետև լաւ եկամուտ կը բերէ։ Կան նաև ռուսներ, յոյներ և հայեր։ Առջևը կայ Մարտինովի մեծ պարտէզը, նաև նրա նոր ու հին

* Գարնան ատեն 2 գեղակալ կ' յորդեն։ Քաղաքին մի ամբողջ թաղը պարտէզներով որ իր սեփականութիւնն է. ունի եկամուտ բերող տներ և կրպակներ։

շէնքերը, որոնք քաղաքէս հազիւ 10 վայրկեան հեռաւորութիւն ունին. բայց երթալով տները միանում են քաղաքին հետ մի ճանապարհով. 2 ճամբայ ունի Եալթան գնալու, կառքեր կ՝ բանին, նաև լինէյկայ, որ 5 կպ. վճարեա՝ կարող ես գնալ այդ տեղ. ունի 2 մզկիթ. 2 դպրոց մին հին մեդռասով, իսկ միւսն՝ ռուս-թաթարական նախակրթարան. բաղնիք մը ունի հիմայ գոցուած. սառնարան մը և կաթնատուն մը կայ փոքր, մանաւոր անձի մը. կան նաև ատաղձագործ, դարբին, երկաթագործ, առևտրականներ, փռեր, սրճարաններ, նոր նոր զեղեցիկ տներ. այս թաթարներու հարուստները, կալուածատէրերը (Ղարասու Պազար, Սիմֆէրոբոլ և շրջակայքը, թաթարաց խաներու ժամանակ կը կոչուէին միրզաներ), ունէին սեփական գիւղեր, հարկատու. բայց իրանց շռայլ ծախսերով կորսնցուցած են նախկին հեղինակութիւնները և կարողութիւնք. գրեթէ մեծամասնութիւնը փճացած են։ Խաները կ՝ նստէին Պաղչասարայ, ուր մինչև հիմայ կայ նրանց պալատը՝ անմարդաբնակ, իբր հնութիւն կ՝ պահուի քաղաքիս արևմտեան կողմը, մէկ աւուր հեռաւորութեան վրայ։

Իսկ միւս գետակը՝ որ կ՚գայ սա ալ լերան ճիշտ գագաթից կ՚վազէ՝ գեղեցիկ, փոքրիկ ջրվէժ մը ձևացնելով. այդ տեղ լերան վրայ կայ ճաշարան մը, նաև պահապանի տեղ մը՝ օդացոյցի համար. այս տեղ հարթ է և ցուրտ, վրան գրեթէ ծառեր չիկան։

Քաղաքից այստեղ կառքով եկւորները՝ ման կ՚գան շինուած խճուղիով մը, որ ոլորմոլոր ճամբաներով անտառի մէջից անցնելով՝ կ՚ելլայ լերան վրայ. ուր ամենալաւ տեղն է. այդ տեղ կը կայնին կառքերը. և այդ տեղից հետիոտն, կէս ժամ հազիւ լինի, կ՚գան Ա.յա=Պետր* ըսուած գագաթի վրայ, որ ցցուած ժայռ մ՚է. ասկից կ՚երևայ Եալթան, Կուրզուֆ, Ալուպկա, Սիմէիզ, բոլորը առջևդ։ Այդ տեղից կը վերադառնան ուրիշ համբով Ա.ուտկայից կրկին քաղաք։ Այդ ջրվէժի ջուրը այդ ձորով կ՚անցնի Ա.ուդկայի ներքևից, յետոյ քաղաքի մէջից ծով։ Ա.ուդկայի բնակչաց մեծամասնութիւնը յոյներ են, կան նաև

* Այդ լեռահարթի վրայ կայ սառնարան (հորեր) ուր ձմեռը կ՚լեցնեն ձիւնով. իսկ ամառը պարկերով կ՚բերեն ձառքով քաղաք կ՚ծախեն. այդ տեղ ծառեր չկան ոչ. կէս 5 ժամէն կ՚գա զառիվեր։

թաթարներ, նաև մէկ–երկու հայ. Ցունաց մի եկեղեցի, մի մզկիթ. նոր բացուած է ծխախոտի փոքրիկ գործարան Պանայոտով անուամբ յոյնի մը, և ճաշարան՝ որ պարտէզներով և այգիներով պատած է։ Վերի և վարի Աուտկայ կայ։ Սրանց հողերը ժամանակաւ հանգուցեալ Կատարինէ կայսրուհին պարգևած է. բայց սրանց շատն ալ չեն գիտցած իրենց տրուած պատուոյ արժանիքը. որ այսպէս տէրութիւն մը իր հպատակներուն հանգստութեան և երջանկութեան համար խորհի եղեր. գրեթէ շատը ծախած են իրենց հողերը։

Լիվատիայ կոչուած կամուրջից հեռուից ջրվէժը կ'երևայ, մանաւանդ գարնան և աշնան ջրերու յորդած ժամանակ։ Այս կամուրջի մօտն է (փոշտը) նամակատունը։ Այս ճամբով դէպ ի հարաւ արևմ. կ' գնան Լիվատիայ, կէս ժամ հեռաւորութեամբ, լեռանց լանջքին վրայ գեղեցիկ դիրքի մը մէջ, որ կը կոչուի Լիվատիայի պալատ ուր կ' գան տարուէ տարի Նորին Վեհափառութիւնն՝ հանդերձգերդաստանիւ։ Սքանչելի, առողջ և քաղցր օդ ունի. քաղցրակարկաչ ջրերը և երփներանգ ծաղկանց անուշահոտութիւնը մարդու կեան-

քը կ՝աւելցնեն, մանաւանդ թռչնոց ճռվռ-
ղումը ուրախութիւն կ՝ պատճառէ։ Պար-
տէզներով շրջապատեալ է և տեսակ տեսակ
ծառերով։ Կան մի քանի հնութիւններ։
Հին պալատի ամարանոցի աւերակները
կեցած են. ուր կայ ձեռագործ աւազան մը
շինուած Սև – Ազախու և Կազբից ծովերու
ձևով. նաև Օրեանտա։ Այդ տեղից կ՝անցնին
Ալուպկա, ծովեզերեայ գիւղաքաղաքն. այս
տեղ ալ տուղ է ամէն բան. բնակչաց մե-
ծամասնութիւնը թաթար է. կան ռուսներ,
հայեր և յոյներ, որոնք առևտրական-
ներ և արհեստաւորներ են։ Կայ մի ըն-
դարձակ պալատ Վարանցով իշխանին,
որ ունի 200 սենեակ բոլորն ալ դաղարկ,
մէջը հին նկարներ կան տեսակ տեսակ. ունի
գեղեցիկ պարտէզ մը պալատի դրան առ-
ջև արևելեան կողմը շինուած կան Զառիւծ-
ներ. այս տեղս ալ ունի ամէն տեսակ պը-
տուղներ։ Հայք են առևտրական՝ Սողոմոն
Պապոեան (կալանտէրէյնի), Յակոբ՝ դեր-
ձակ, Կարապետ Պաշարատեան (չիւվէք)
ոսնաման ծախող, Յակոբ Խաչատուրեան՝
կանաչեղենի, Ստեփան Պետրոսով՝ ոսկե-
րիչ։ Սրան ճամբուն վրայ է, Սիմէյիզի քով,
բնութեան հրաշալիք՝ կատուի նմանող լե-

286-286

ոը։ Քաղաքէս կէս ժամ հեռաւորութեամբ՝ դէպ ի արևելք՝ է Մասանտրայ ըսուած տեղը, ուր կան կրկին պալատներ՝ նոր շինուած, նաև եկեղեցի. այդ տեղ տարին անգամ մը ժողովուրդը կ՝ գայ ուխտի՝ սեպտեմբ. ամսոյ մէջ՝ միայն մի օր, կ՝ուտեն կ՝ խմեն, կ՝ պարեն, կ՝ ծախեն, և երեկոյեան կը վերադառնան տները ոմանք ալ գիշերով կ՝ գան, մանաւանդ փոքրիկ առևտրականները. բայց նախապէս հրաման պիտի՝ առնուի քանթորից՝ տանալով տոմս մը, ձրի կարող է գնալ առանց արգելքի։ Ջրերը պաղ, քաղցրահամ. եկեղեցիին առջևից փոքրիկ Ջուր մը կ՝ վազէ, որ Ջաղացքի մը քարը կ՝ դարցունէ։ Այդ տեղից կ՝ գնան Նիկիտակայա, ուր կայ գիշերօթիկ դպրոց մը թագաւորական. կ՝ուսանին պարտիզպանութիւն. գրեթէ ամէն տեսակ բոյս և պտուղ կայ, մեծ պարտէզով։ Անկէց ալ կուրգուֆ։ Այս ծովեզերեայ գիւղաքաղաքի բնակչաց մեծամասնութիւնն ալ թաթար են. ունին մզկիթ և դպրոց։ Կան ռուս յոյն, մի քանի հայ. կայ նաև պարտէզ մը։ Այս մօտ է Յոռք-սու (Պաղ – Ջուր) հիւրանոցը. նաև Այտուտդը (Արջու լեռը) որ ճիշդ արջու կ՝ նմանի, երբ նայիս Այա–

Պետրա լեռի գագաթից՝ կարծես գլուխը ծովը խօթած է։ Քաղաքէս այս տեղ և Ալուպկա՝ օրը 2 – 3 անգամ 2 փոքրիկ շոգենաւակք կը բանին մարդոց և բեռի համար. կայ նաև մալի բոշտ ցամաքից 2 տեղի համար՝ օրը մէկ անգամ։ Վերոյիշեալ հեռաւոր տեղեր երթալու համար, ամէն տեղ իր օրը ունի, որ երեք տեղէ տոմս կ՝տրուի. առաջին–քաղաքին կլուպը. Բ. Պէպէզը Գ. Կառքերու ընկերութիւնը։ Օր մը առաջ տոմսը կ՝առնուի իւրաքանչիւր անձի համար, և մի օրուայ համար մէկ արծաթ 25 կպ. մինչ 80 կպ. է. մէկ լինէյքաի վրայ կառք մնէ 2 կողմէն 8–10 անձ – 80 կպ. 1. արծ. իսկ կառքի վրայ միայն 5 հոգի 5–8 կառքին կ՝ գնան, նաև ունին անպատճառ թաթար կառապետ մը նաև կայ լուսանկարիչ մը որ խմբովին կ՝ հանէ լուսանկարները. առանձին կը ծախուի փափաքողը կ՝առնու հատը 50 կպ.ի։

Քաղաքը ունի 2 տպարան մին որ Նապերեժնուին է կ՝ելլայ ամենօրեայ լրագիր մը Կրըմի–Ինվէր անուամբ։

Ամենագլխաւոր հիւրանոցներն են Ռուսիայ Կատինիցա։ Զենտրալնաեայ կաս.

Ֆրանցիա կաս. Տաւրիդի, Ամէպիլէրով-
նի կաս. Կոանտ Օդէլ կաս. Օրեանտա
կաս. Մառինօ կաս. Միտրոպոլ կաս. Պե-
տերպուրգ կաս. Լօնտօն կաս. Պրիսաու
կաս. Իւժնի կաս։ Ինչպէս յիշած եմ, շատ
տներ կան, կահաւորեալ սենեակներ իբր
հիւրանոցներ կը ծառայեն թէ հիւրանոց-
ներում թէ այս տեղերում. վերին աստի-
ճան մաքրութիւն և հիւրասիրութիւն ցոյց
կը տան. կառավարութենէն այդ մասին
միշտ հոգ կը տանին մանաւանդ հանգըս-
տութեան և թէ գողութեան մասին շնոր-
հիւ տեղւոյս կառավարիչին, մեծ ազնիւ
Կէօզտէվիչի, քանի սա փոքր պաշտօնեայ
էր միշտ կը բռնէր չարագործները 100ին
հազիւ մէկը սրա ձեռքից կ'ազատէր, մա-
նաւանդ հիմայ ամէն բանի խստիւ կը
հսկէ և անաչառ կը դատէ, դրա համար
քաղաքը միշտ հանգիստ է։ Եկեղեցիներու
մեծամասնութիւնը տեսակ տեսակ հի-
ւանդներ են ոմանք չեն ազատիր. ունի
նամակատուն մը լիվասակի կամուրջին քով
նոր շինուած. կայ 28 փուռ, և 9 քաղ-
ցրեղէն և կաթնավաճառ պազարը՝ և Նա-
պէրէժնին փէյհլուլէֆէ էմին էֆէնտի Մա-
ռանտիտի, Տարախչի և այլք։ 4 բաղնիք,

4 հատ ալ վաննաներ կան 2ը ծովի։ Քաղաքը ունի փոքր պարտէզ մը գարնան (սէզօնի մէջ) ամէն օր մի խումբ նուագածուներ այդ տեղ կ՝ նուագեն որպէս զի եկեղեցիները ուրախանան, նոյնպէս Ռուսիա կատինիցայում ուրիշ խումբ մը կ՝ նուագեն։ Գլխաւոր բանուկ փողոցն է Նապրեժնէն (ծովեզերքը), մաքուր հագուած կապած ման կ՝ գան. իսկ հասարակ ժողովուրդը բանուոր դասակարգը բազարումն է, այդ տեղ կայ 5 — 6 տրակտիր, գինի մանաւանդ օղի կ՝ ծախուի, նաև թէյ և կերակուր, ամէն օր ժամը 5ից առաւօտեան բաց է մինչ գիշերը ժամը 11ը. նուագաբանները կ՝ գարնուին և այս ալքոհը ի՛նչպէս կ՝ պաշտուի (խմուի). անշուշտ մէկ գաւաթ խմելը ներելի է հապա չափը անցնի մարդ ի՛նչ ողորմելի արարած կ՝ դառնայ և թշուառութեանը պատճառ իր ձեռքով կ՝ըլլայ ինք. այս տրակտիրի միոյն տէրը հայ մըն էր Պ. Յովհաննէս Պապով, իսկ միւս ալ ռուս է, Եկոռ Սօլովով երկուքն ալ տեսակ տեսակ խմիչքներ ունին։ Խոհարարանոցներ բռնողներ տաճիկ և յոյներ են. լաւը Տամիեանոս անուն յոյն է. ունի խմիչք գինի պիվա

(ոչ վոտքա)։ Կան սրճարաններ թուրքի յոյնի և հայու այս բազարի մօտն է միասնի պազարը 5–6–մսի խանութ կայ. մսի ֆունտը 16 մինչ 24 կպ. երբեմն ոչխարինը աւելի կ' սուղնայ, կաթի շիշը (պութուլկան) 10 կպ. բայց աւելի ընտիր է լեվատիայի կաթը, որը կ' ծախուի աշուանները միայն քիչ ժամանակ այդ տեղ կառքով ալ, այն տեղաց կովերի կերածները մաքուր խոտ է իսկ ուրիշներունը թէ և լաւ բայց չէ՞ որ հաց կամ կերակուրի աւելուք կ' տան։ Իւղի ֆունտը 40–50 կպ. բայց լիվատիեայինը մէկ արծաթ է այն ալ շատ անգամ չիլլինի, իր մէջ շուտ կ' ծախուի։ Ձուն 3 կպ. մինչ 5 կպ. կ'ելլայ. իսկ տների վարձը աւելի սուղէ այդ պատճառով 5–6 անձ մէկ սենեակի մէջ կ' պառկին 7 րպ. և փոքր շրջակայ քաղաքներուն նայելով ամենասուղ տեղը այս տեղ է։ Ֆէոսիեայից Եւպատորիայից նաւակով, իսկ շրջականերից և Սիմֆէրոպոլից (աղմէճիտ) կառքերով ուտելիք կ' գայ. մինչ Պաթումից ձուկ կ' գայ, Ռոստովից ձուկ և պտուղ, ապրանք։

Ուչասակայի քոմն է երկաթուղիով գնալու տոմսը ծախուելու տեղը Կիէվ և այ-

լուր Սևաստոպոլով. այժմ կայ ինքնաշարժ կառք որ Սևաստոպոլ և Սիմֆէրոպոլ կ' գնայ իւրաքանչիւր անձի 8–10 րպ. 3 – 4 ժամէն կ' գնայ – ամէն օր գրեթէ կայ. ամառը նոր պիտի շինուի թրամվէյ քաղաքին մէջ և այժմեանից կ' պատրաստուի երկաթուղի շինուիլ տեղէս մինչ պաղչասարայ որպէս զի միանայ Սեւաստոպոլ և Սիմֆերոպոլ ճիւղին, այժմեանից ճանապարհները կը հեռացուին: Ունք ունին մէկ հատ արհեստանոց գպրոց գիմնազիայ 8 դասարանով մանչերու, նաև մի գիմնազ աղջկանց. կան 3–4 նախակրթարան. ունի 2 ժամ մին սապորը (սրբոր) որի հիմքը օծեց նորին վեհափառութիւն Նիկոլա կայսրը:

Բաւական եւրոպացի ալ կայ. յոյները ունին ժամ մը Ուսկայում*, բայց հիմայ փոշի քով նոր եկեղեցի մը հիմքը դրին. նախապէս գպրոցը պատրաստեցին որ հիմայ սովորում են: Ազգ մը և թէ մարդիկ

* Այդ թաղին ներքևն է (նովի պազարը) այդ տեղ ևս կան խանութներ նոր շինուած հիմայ ուռելիքները որ կ' գայ դրսից կառքերով 2 օր այս տեղ կ' ծախուի, կան մի 2 հայեր Մխակ պոռիկեան, սափրիչ, Խաչատուր Թաթէոսեան՝ սափրիչ. 2 հատ պաղալաճառ 1 հայ կոֆէճի:

նախ կրթութիւնով երջանիկ կ' ըլլան։ Հրեայք ալ ունին սինակոկա մը. նոյնպէս եկեղեցի մը ունին Լուտերականները, և ուրիշները մէյ մէկ հատ։

Պեռուրպուրքից կ' գան մինչև իսկ մորթուած թռչուններ, սառոյցով պլլված հատը 3 ր. 4 ր.

Հրեայք իբր 50–60 տուն կ' հաշուին 188 անձ. իսկ Ֆրմչաք 13 տուն. Ֆարթիմք ալ գրեթէ նոյն չափ. ամբողջ Խրիմի մէջ Ֆրմչաք 2500 անձ կ' հաշուեն սրանք աւելի մօտ են կրօնով և գործով հրեաներուն, են արհեստաւորներ իսկ տեղի բնակիչ հրեաները առևտրական, քարթիմները վաճառական։

Կարծեօք 20,000 բնակիչ կայ։ 25 հազարից մինչ 40,000 եկեորներ կը գան կը գնան ամբողջ տարին. բնակչաց մեծամասնութիւնը ռուսներ են ու յետոյ յոյներ որ գրեթէ 1000 անից աւելի են։

ԵԱԼԹԱՑԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ*

Ազիատսկի. Պերեուլօկ.	Ըստարի. գօրօդ
Աուտսկաեա. ուլիցա	Ենվբիի. »
» »	Նիժնեաեա. տուդկա
Բազարնաեա. »	Ըստարբրի. գօրօդ
Բալակլավսկիի. տուպիկ	Զարիչէ
» ուլիցա	»
Բարեատինսկիի. պէրէուլոկ	Նիժնեա. տուտկա
» ուլիցա	»
Բասսէինաեա »	Ըստարբրի գօրօդ
Բէզիմեաննրբիի. պէրէուլօկ	Զարիչէ
Բէիւկ սարայիսկաեա ուլիցա	»
Բօտկինսկաեա. ուլիցա	Ենվբի. գօրօդ
Բուլվարնաեա. »	Ըստարբրի.»
Գիմնազիչեսկաեա. »	Ենվբի »
Գլուխոյ. պէրէուլօկ	Զառէչբէ
Գրաֆսկիյ. »	Նիժնեա. տուտկա
» պրօէզդ	Ըստառի. գօրօդ
Գովալլօվսկիի. պէրէուլոկ	Նիժնեա. տուտկա
Գոգոլեվսկաեա. ուլիցա	Զարիչէ
Գորնբիի. պրոսպէկտ	Ենվբիի. գօրօդ
Գարսանովսկաեա ուլիցա	» »
Դվորեանսկաեա. »	Ըստարի »
Դարոգա. տէրէ քոյ.	Ենվբիի »
Դոսաոէվսկաեա. ուլիցա	Զարէչէ
Եայլինսկաեա. »	»
Եկատէրինսկաեա»	Ենվբիի. գօրօտ
Ելիզավէտինսկաեա»	Ըստառի »
Զազորոդնեա »	Ենվբիի »

* Ենվի=Ներ, Ըստառի=Հին, Գորոդ=Քաղաք, Ուլիցա=Փողոց։

Զէմակիի պէրէուլօկ,	» »
Էմիրա բուխարսկայա, ուլիցա	Զարեչէ
Լիվառակի մօտա	
Լազարեվսկիի. պէրէուլոկ	Զարէչէ
Լէոնաեա. ուլիցա	»
Լիւտերանսկիյ. պէրէուլոկ	Նօվբիյգոռոդ
Լոմանաեա. ուլիցա	Զարէչէ
Լոմոնոսովսկիյ. բուլվար	Նիժնեաեա առուտկա
Կարաիմսկիի. պէրէուլօկ	Ըստառի գոռոդ
Կարերնաեա. ուլիցա	Զարէչէ
Կնեաժեսկաեա. »	Նօվբիի գոռոդ
Կաազնիի. պէրէուլօկ	Նիժնէաեա առուտկա
Կրեառոսլաեա. ուլիցա	» »
Կրուռոյ. պէրէուլոկ.	Ըստաբբիի գոռոդ
» »	Նիժնէաեա առուտկա
Կուզանսկաեա. ուլիցա	Զարէչէ
Մառառնդրոսլսկաեա. ուլիցա	Ըստարի գոռոդ
Մառոսլսկիյ. պէրէուլօկ	» »
Մեիերսլսկաեա. ուլիցա	Զարէչէ
Մէշչերսկիյ. պէրէուլօկ	Նիժնեաեա առուտկա
Միլիուտինսկաեա. ուլիցա	Նօվբիյ գոռոդ
Մօրսկաեա. »	» »
Նաբերեժնաեա. »	» »
Նազարնաեա. »	Ըստառբիյ գոռոա
Նիժնե–մառառնդրոսլսկաեա. ուլիցա	» »
Նիժնե — պոզբանիչնաեա. ուլիցա	Զարէչէ
Նիժմե–սլաբոդսկաեա. ուլիցա	Ըստարբիյ գոռոա
Նիկոլաեաեսկաեա. ուլիցա	Զարէչէ
Շէլոմիխսկաեա. »	»
Ուչան–առ. »	»
Զայնաեա. »	»
Զէրնոսմոսկիի. պէրէուլօկ	Նօվբիի. գոռոդ
Պիրոգովսկաեա. ուլիցա	Զարէչէ
Պէշէխոդնբիի. պէրէուլօկ	Ըստարի. գոռոդ

Պլատանովաեա. ուլիցա	Նովբիի. »
Պուշկինսկիի. բուլվար	» »
Պուտէիսկիի. պէրէուլոկ	Նիժնաեա. առուտկա
Պրօխոդնոյ. »	Զառէչէ
Պօլիկուրովսկայեա ուլիցա	Ըստաուբի. զոռոդ
Պոտեմկինսկիի պէրէուլօկ	Նովբիի. զոռոդ
Պրօչզդ կը պոտապովու	Զարէչէ
Ջուկուրլարսկաեա. ուլիցա	»
Սադովաեա. ուլիցա	Նովբիի. զոռոդ
Սեվաստապոլսկաեա. ուլիցա	Զարէչէ
Սիմֆերոպոլսկաեա. ուլիցա	Ըստարբբի. զոռոդ
Սլօբոդսկաեա. »	» »
Սրեդնի–սլօբոդսկայա. »	»
Սուվորովսկաեա, »	Զարէչէ
Վերխնի–Պոգրանիչնաեա. ուլիցա	Զառէչէ
Վերխնի – սլապոդսկաեա. ուլիցա	Ըստառի. զոռոդ
Վինոգրադնաեա. ուլիցա	Նովբիէ. »
Վորոպրովոդնաեա. »	Ըստարբբի. »
Վոդոնցովսկաեա. »	Զարէչէ
Տառարսկայա. »	»
Տուպոյ. պէրէուլօկ	Ըստարբբիի. զոռոդ
» »	Նովբիի. »
Ցերքովնբի. պէրէուլօկ	Ըստարբի. զոռոդ
Օբխոդնոյի. պէրէուլօկ	Նիժնեա առուդկա
Օբշչիննբիյ. »	Նովբիյ զոռոդ
Ֆոնտաննաեա. ուլիցա	Ըստարբի. »

*

Եալթայի մէջ ամէն տեսակ հիւանդութեանց բժիշկներ կան որոց թիւը 53 է։

7585
7586
7587
7588
7589
7590

0003646
0003647
0003648
0003649
0003650
0003651

2113